Գեղամաբակ գյուղի հիմնական դպրոցի տնօրեն Ա. Բարսեղյան

5-րդ դասարան

Ուսումնադատիարակչական աշխատանքների պլան

**Շաբաթական 1 ժամ (34 ժամ)**

**Դասղեկ Ս. Նավոյան**

**Կրթական դաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները**

1. Ներածություն (դասարանի ընդհանուր բնութագիրը) Դասարանը բաղկացած է մեկ աշակերտից: Ընդանուր առմամաբ նա ունի բավարար ընդունակություններ, հաճախում է դպրոց ճիշտ ժամանակին և ցուցաբերում է ակտիվություն, նա դժվար դաստիարակվող աշակերտ չէ:

2. Ուստարվա ընթացքում նախատեսվող ուսումնադաստիարակչական աշխատանքները ա/ բ/ գ/

ա/Ուսումնադաստիարակչական նպատակով պետք է հաճախակի հետևել դասարանի վարքին և ուսման առաջադիմությանը:

բ/Հրավիրել ծնողական ժողովներ, որոնք կնպաստեն աշակերտների ակտիվությանը:

գ/ Աշակերտների մոտ ձևավորել բազմաբնույթ կարողություններ (կարգապահություն, մաքրություն, անձնական հիգիենա, համագործակցություն, փոխօգնություն) և նպաստել բազմակողմանի զարգացած աշխարհայացքի ձևավորմանը:

3. Հայեցի դաստիարակություն

3.1 - Հոգևոր դաստիարակություն: Այս նպատակով կազմակերպել էքսկուսիա դեպի մոտակա հոգևոր մշակութային կենտրոններ: Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք քրիստոնեության նկատմամբ: Նույն նպատակով կատարել պատմական ակնարկ, որը կնպաստի հոգևոր դաստիարակության ձևավորմանը:

3.2 - Գեղագիտական դաստիարակություն: Ֆիլմերի, պատկերասրահներ իրականացրած այցերի, բնապատկերների, բնության երևույթների միջոցով ցուցադրել և բացատրել, թե գեղեցիկը ինչ դեր ունի ներկայիս կյանքում: Բացի այդ լսել աշակերտների կարծիքը այդ նյութի և կամ դիտարկված երևույթների վերաբերյալ: Կյանքից բերել օրինակներ և ձևավորել գեղագիտական ճաշակ:

3.3 - Ռազմահայրենասիրական դաստիարակություն: Հայրենասիրության կրթության վերաբերյալ կազմակերպել քննարկումներ: Նշել մի շարք ֆիդայիների անուններ և թվարկել այն բնավորության գծերը, որտեղ ակներև է հայրենասիրությունը և ռազմարվեստի ձևերը:

3.4 - Ֆիզիկական դաստիարակություն: Դասապրոցեսին պետք է ցուցաբերել ակտիվություն: Բացատրել և պահանջել, որ աշակերտները հետևեն իրենց ֆիզպատրաստությանը: Կոփեն իրենց մարմինները ֆիզվարժությունների և հնարքների միջոցով:

3.5 - Աշխատանքային դաստիարակություն: Աշակերտների մոտ ձևավորել սեր դեպի աշխատանքը և աշխատավոր մարդը: Տալ աշակերտներին այն գաղափարը, որ կարողանան գոյատևել ներկայիս դժվար պայմաններում իրենց աշխատասիրության և կատարած աշխատանքի միջոցով:

3.6 - Բնապահպանական դաստիարակություն: Պետք է կազմակերպել էքսկուրսիաներ դեպի բնության գիրկ և այդ ընթացքում թվարկել բնապահպանական մի շարք խնդիրներ, որոնք առկա են իրենց շրջապատում: Կազմակերպել քննարկում՝ փորձելով աշակերտների միջոցով վեր

հանել տվյալ բնապահպանական խնդիրների առաջացման պատճառները, մարդկային գործոնները և խնդիրների լուծման ճանապարհները:

3.7 - Դպրոց-ընտանիք կապը: Երեխաները պետք է հասկանան, որ ընտանիքը հանդիսանում է պետության կորիզը: Միևնույն ժամանակ գիտակցեն, որ պետք է սերտ պահեն դպրոց ընտանիք կապը, որպեսզի համատեղ ջանքերով հասնեն առավելագույն արդյունքի :

# ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՇԱԿԵՐՏԻ ՄԱՍԻՆ

| Աշակերտի անուն, ազգանուն, հայրանուն | Դպրոց ընդունման տարեթիվ, հրաման, թիվ | Աշ. շարժի համար | Ծննդ օր,ամիս,տարի | սեռ | հասցե |
|---|---|---|---|---|---|
| Հարությունյան | | | | | Ք. |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Նարե Արեգի | | | | | Վարդենիս |
| | | | | | |

| N |
|---|
| 1 |
| 2 |

| Ուսումնական շաբաթներ | Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակություն | Կատարման ամիս | կատարողներ |
|---|---|---|---|
| 1 | Գիտելիքի ուժը | սեպտեմբեր | Դասղեկ/սովորող |
| 2 | Զրույց հարգանք մեծերի նկատմամբ | սեպտեմբեր | Դասղեկ/սովորող |
| 3 | Ինչ է ընկերությունը | սեպտեմբեր | Դասղեկ սովորող |
| 4 | Աշակերտի իրավունքները և պարտականությունները | սեպտեմբեր | Դասղեկ սովորող |
| 5 | Զրույց ով է ուսուցիչը մեր կյանքում | հոկտեմբեր | Դասղեկ սովորող |
| 6 | Առողջ ապրելակերպի գաղափարը | հոկտեմբեր | Դասղեկ սովորող |
| 7 | Զբոսանք աշնանային հրաշք ծառուղիներով | հոկտեմբեր | Դասղոկ սովորող |
| 8 | Պատմական ֆիլմի դիտում | նոյեմբեր | Դասղեկ սովորող |
| 9 | Հանդուրժողականություն | նոյեմբեր | Դասղեկ սովորող |
| 10 | Իմ ընտանիքը | նոյեմբեր | Դասղեկ սովորող |
| 11 | Լեզուների կարևորությունը մեր կյանքում | նոյեմբեր | Դասղեկ սովորող |
| 12 | Բնական աղետներ - երկրաշարժ | դեկտեմբեր | Դասղեկ սովորող |
| 13 | Առողջությունն ու սպորտը | դեկտեմբեր | Դասղեկ սովորող |
| 14 | Առաջադիմության քննարկում | դեկտեմբեր | Դասղեկ սովորող |
| 15 | Զրույց իմ հայրենիքը | հունվար | Դասղեկ սովորող |
| 16 | Իմ զբաղմունքները ազատ ժամանակ | հունվար | Դասղեկ սովորող |
| 17 | Ինչպես անվտանգ օգտվել | հունվար | Դասղեկ սովորող |

| | | | |
|---|---|---|---|
| | համացանցից | | |
| 18 | Ինչ եմ հասկանում բանակ ասելիս | հունվար | Դասղեկ սովորող |
| 19 | Բարին արա, բարի գործեր մեր կյանքում | փետրվար | Դասղեկ սովորող |
| 20 | Տյառն ընդ առաջ | փետրվար | Դասղեկ սովորող |
| 21 | Գրքի տոն | փետրվար | Դասղեկ սովորող |
| 22 | Խիղճ, ամենամեծ դատավորը | փետրվար | Դասղեկ սովորող |
| 23 | Աստվածաշունչ | մարտ | Դասղեկ սովորող |
| 24 | Իմ սիրած զբաղմումքը | մարտ | Դասղեկ սովորող |
| 25 | Սիրված ստեղծագործությունների ընթերցում | մարտ | Դասղեկ սովորող |
| 26 | Այսօրվա գործը մի թողնի վաղվան | ապրիլ | Դասղեկ սովորող |
| 27 | Արվեստը սահմաններ չի ճանաչում | ապրիլ | Դասղեկ սովորող |
| 28 | Ինչու է գիրք կարդալը օգտակար | ապրիլ | Դասղեկ սովորող |
| 29 | Քաղաքավարության կանոնները սեղանի շուրջ | ապրիլ | Դասղեկ սովորող |
| 30 | Մարդիկ, առանց որոնց մենք մենակ ենք | մայիս | Դասղեկ սովորող |
| 31 | Ժպիտը մարդու կյանքում | մայիս | Դասղեկ սովորող |
| 32 | Ես և ուրիշները | մայիս | Դասղեկ սովորող |
| 33 | Առաջադիմության քննարկում | մայիս | Դասղեկ սովորող |
| 34 | Էքսկուրսիա | մայիս | Դասղեկ սովորող |